

ցուեցաւ քրիստոնէութիւնն, և կրակ կորած  
 անձնաբանի վրայ տարածուելով նախ-  
 տակեցաւ: Յանուն իրենց աղնուական տի-  
 րոջ՝ Եւստասիոսեանք կոչուելով անտիպիին  
 Սուրբքս, յ'13 գեկա. ամսոյ զեղեցիկ Վիս-  
 յարանութիւն մ'այլ թարգմանած են մեր  
 նախնի հարք ի յունարէնէ, յարում կ'ըսուի  
 որ թէ քահանայն Օքսենա և թէ Եւստաս-  
 տիոս կապալ պատուիրեցին որ զիրենք  
 թողն յԱբորակ. յեախն նա և կատակեց  
 որ իր ստացուածքն երեք մաս բաժնելով ասն  
 աղքատաց, եկեղեցոյ և իր քրոջ: Վիսյած  
 են յամին 305: Մեր եկեղեցին այլ նուիրած  
 է և երգէ ամէն տարի իրենց ասնին՝ հինգ  
 տուն անուշիկ Եարականը:

Ասն կողմերու հայարնակ Արարիսու ա-  
 նուամբ քաղաքն այլ յամի 309 ընծայած է  
 կեսար նահատակը, որոյ յիշատակն գրուած  
 է ի 28 գեկա: Արիչ է սա ի Կեսարիա նա-  
 հատակուած կեսարին, որ յիշուի յ'3 նոյեմբ:  
 Նիկիոյոյիս Հայոց քաղաքն այլ կնչպէս ա-  
 սուջին հալածանաց ատեն, այս ետքի մեծ  
 հալածանացս այլ ընծայած է սուրբ նահա-  
 տակներ. որպէս, Ղեւռոյ և Մաշիկ, յամի  
 318 կամ 320. շատ ընկերներով, ծանօթ  
 Լիւսիասին հրամանաւ. ասոնց յիշատակն  
 գրուած է ի 10 յուլիսի: — Երկրորդ օրն  
 այլ (11 յուլ.) յիշատակուին Յանուար (Ja-  
 nuarius) որ շորս օր շարաշար անձնուեցաւ,  
 երկաթէ ճանկերով պատընառուելով և խա-  
 բուկուելով, և Պեղագիս վկայուէի մի. ասոնք  
 հալածանաց սկիզբներուն նահատակուած են  
 այս յատուկ Հայոց քաղաք կոչուածին մէջ:  
 Եարայարելի 2. 1. 4. Ե. Ա. Ե. Ա. Ե.

**Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն**

Բ Ա Ղ Ե Ն կամ Պիթիւղ, ԳՁ, BITLIS Թ.  
 000, 75 ամս զմեռ զմեռ զմեռ զմեռ զմեռ

Բ Ա Ղ Ե Ն կամ Պիթիւղ, ԳՁ, BITLIS Թ.  
 Գեղեցկատեխնիկ փանտաշահ  
 Բնակարանի քաղաք Աղձնեաց Սալմոյ ձոր  
 և անուանի քաղաք Աղձնեաց Սալմոյ ձոր  
 պարսկի մէջ: Թովի մահերևութիւն 4837

սմնաշարի լայրձք է, կըլ գտնուի Վահայ ծու-  
 լիսի տարեմտեան հնրապային կողմը, զրիթէ  
 ք ժամ հեռու, և Մշոյ հարապային արեւ  
 եկան կողմը: Զ ժամ հեռաւորութեամբ: Մեր  
 հին պատմիչները իննկերույ դարէն անաջ  
 չեն յիշել քաղաքիս անունն: անաջին ան-  
 դամ թոյմա Արծրունին կը յիշէ պայն Վիշե-  
 յով շահասանա իսկ Վարդան անշուրհա-  
 զիրը Բաղէշը կը գնէ Տուրուբերանի Բղնու  
 նեաց զնառի մէջ: Բաղաքիս անունն ա-  
 լելի սուկայ կը յիշուի վերջին դարերու հե-  
 ղինակովմանց և զրոց յիշատակարանաց  
 մէջ, և մինչեւ անգամ Եպիսկոպոսակիս  
 քաղաք կոչուած է, որոյց յայտնի չէ թէ  
 երբ սկսած և հաստատուած է այն տեղ  
 եպիսկոպոսական աթոռ: Այցեալ պարերու  
 մէջ յիշուած Բաղէշու անաշուրդներէն յայտն  
 նի են ոմն Մեսրոպ վարդապետ, 1685  
 թուին Սեւեթ վարդապետ, Ստեփանոս Ե-  
 պիսկոպոս, և այլն: Բաղէշ անուան ծագման  
 համար անանգութեամբ հետեւեալը կը պատ-  
 մուի մէկու մը էլը որ բնակչաց կառնելով  
 ցուրտին ամենազմայցիուն կենդանին է,  
 ձմեռը Չիֆթա կոչուած ձորին անցած ժա-  
 մանակ ձեանց մէջ խրելով սառել կամ պա-  
 դեր է, և այդ պիտուածէն տեղը կոչուեր է  
 Պաղ էշ, որ յետոյ իբր թէ, աղաւաղած և  
 եղած է Բաղէշ:

Կառացուած է մասամբ ձորերու մէջ և  
 մասամբ լեռանց պարսպներու վրայ, և ա-  
 մէն կողմէն շրջադառած լինելով բազմաթիւ  
 ձորերով և գեղարամապայի լեռներով հրա-  
 շալի և նկարչական զուարճալի զիրք մ'ու-  
 նի: Չորս ձոր արեւելքէն, յարեւմտից, հիւ-  
 սիսէ և հարուէն երկնայալ կը միանան քա-  
 ղաքին մէջ. ասոնքն երեք ձորերու մէջէն  
 կը վազեն հետեւեալ դասինին, Անպակամ  
 Հաւպն ջուր, Աշեխու ջուր, Խոցերու ջուր  
 Խոնարու ջուր որ բրդերէն Անյուտը ջուրը  
 կը կոչուի: Այս վակները իրենց անուննե-  
 րը անած են յոյնանուն գաղղերէն. քաղա-  
 քիս մէջ իրարու հետ միանալով կը ձեւացը-  
 նեն Բաղէշու ջուր կամ Անի-Պիթիւղ գե-  
 տակը որ վազելով հարաւային ձորի մէջէն,  
 և մի քիչ դեպ ի արեւմուտք շրջան ընելէ  
 վերջ, սուղակի գետի հարսու կ'ընթանայ ընդ

ունելով սերիշ վասկներ, սե կը թափի Տի-  
գրիսի մէջ: Քաղաքը թէ և սարսուղացաւ չէ,  
բայց զլնաւոր փողոցներու ծայրերը զոներ  
ունի, որոնք են. ա. վլան-գափոռար, ք. Չիր-  
միչիք-գափոռար, գ. Արսայ-չարառ-գափոռ-  
ար, դ. Ամիրա-չարառ-գափոռար (Ամիրոռ  
չուհիայի դռն), և. Մեյրաբեկ-գափոռար և  
գ. Օղորուն-գափոռար, որ շատ չի գործածուի  
և հայերէն Գորտաւն դռն կը կոչուի:

Տները վերոյիշեալ ձորերու միջին ան-  
ցնող վասկներու եզերքէն սկսելով և հետ-  
զհետէ աստիճանաձեւ կարգ կարգ դէպ ի  
վեր բարձրանալով տարածուած են լիբանց  
զատ ի վայրերուն վրայ. մեծաւ մասամբ  
իրարմէ հետու են և ծառազարդ պարտէզնե-  
րու և արտերու մէջ գուարճալի դիբք մ'ուն-  
նին: Ընդհանրապէս երկայարկ են և արտա-  
քուստ ոչ այնչափ ճաշակաւոր. շինուած են  
մտրապոյն սրբատաշ փխրուն (փնւտ քար)  
ըստ տեղացոյց) բայց զիմացիւն բարէ, որոյ  
հանքը շատ առատ է քաղաքիս մէջ և շրջա-  
կայքը. կան նաեւ գոյնզոյն քարերով շի-  
նուած տներ և մի քանի ուշադրութեան  
արժանի ասպարաններ և կամարակապ շինու-  
թիւններ: Չորաբերաններու նիշդ կեղծոր,  
հիւսիսէն դէպ ի հարաւ երկնցած քարան-  
ձաւի մը վրայ շինուած է բերդը: Յայտնի  
չէ թէ ո՞ր և երբ կառուցած է բերդս. ա-  
ւանդութեամբ այս միայն զիտեք, որ Լէկ-  
թիմուր աշխատեր է բայց չէ յաջողեր բեր-  
դին տիրելու: Հարաւային կամարակապ և  
տեղակ գրան վրայ արաբերէն արձանա-  
գրութիւն մը կայ, որ կը յայտնէ, թէ բերդս  
շինուած է տաճկաց 902 թուականին (4496  
քրիստոնէից թուականին) սուլթաններէն  
միոյն ձեռքով. բայց կ'երեւի որ նոյն թուա-  
կանին սուլթան մը նորոգած է միայն զայն  
և իւր շինութիւնն աւելի հին է: Հնագոյն  
լատիներէն անվերձանելի արձանագրութիւն  
մը, և ուրիշ յիշատակարաններ և աւանդու-  
թիւններ կը ցուցնեն, թէ Քաղէջ ի հուպ  
Հայոց ճոխ ու բազմամարդ քաղաքներէն մին  
եղած է, և մեր իշխանութեան կործանման  
ժամանակ և վերջը, ուրիշ քաղաքներու  
պէս հայ բնակչաց բազմութենէն և ճոխու-  
թենէն զրկուեր է. Բարանձաւի ամէն կող-

մի երեսներն խորտուարու են, և վերէն վար  
ուզղահայեաց դիրք մը ունենալուն պատ-  
ճառաւ շրջապայտ ճամբայ մը շինուած է,  
վրան քարաշէն բարձր կամարով ծածկած:  
Այժմ բերդն տեղակ, լքեալ և ամայի վի-  
ճակի մէջ կը գտնուի. դռնէն սկսելով ամէն  
կողմ տեղակաց կոյտեր կը ներկայանան,  
տեղ տեղ ալ կիսակործան շէնքեր՝ զանա-  
զան ձեւերով: Անցեալ դարու սկիզբները  
կան եղեր նաեւ երկար ժամանակ քաղա-  
քին տիրապետող Պարսից խաներու աղա-  
բաններ, որոց հետքն անգամ աներեւոյթ  
եղած է այժմ. տակաւին մնացած են միայն  
քանի մը թրբաց հին տուներ և փոքրիկ  
մզկիթ մը: Բերդի հիւսիսային ծայրէն բիշ  
հետու բլուր մը կայ և վրան բառակուսի  
աշտարակաձեւ շէնք մը: Կը պատմեն թէ  
ասիէ դար մը առաջ այդ շէնքի վերի ծայ-  
րէն դէպ ի բերդը կամար մը ձգուած էր,  
որուն վրայէն քարաշէն խողովակներու մէջ  
անցուցած հողէ թրծուած խողովակներով  
ջուր կու դար հիւսիսային կողմի լեռան աղ-  
բուրէն և երբ մասի կը բաժնուէր. մէկ մասը  
բերդին, միւսը կ'երթար Կարմրակ եկեղեց-  
այն բակը և երբորդը թրբաց կէօք-Մէլյան  
մզկիթի բակը: Այժմ այս անցքերը բոլո-  
րովին խանդարուած են, վերոյիշեալ կա-  
մարն ալ փլած և միայն տեղ տեղ կը տես-  
նուին խողովակներու մնացորդներ: Բերդի  
արեւելեան և արեւմտեան ստորսարը մէկ  
մէկ խոռոչներ կան, ուրկէ դէպ ի վեր տանող  
բարէ աստիճաններով գաղտնի նեղ ճանա-  
պարհներ փորուած են: Կ'ըսեն թէ ուրիշ  
գեանափոր ծածուկ ճանապարհ մը եւս կար,  
մէկ մզոնէն աւելի երկայնութեամբ, որ բա-  
ղաքին հարաւային կողմը վտակին վրայ շի-  
նուած Քաղխեկց անուն կամարը թող  
կը հանէ եղեր, որուն զաներն այժմ չեն  
տեսնուիր:

Քաղէջ ի հնումն խիստ բազմամարդ էր  
և ըստ Հ. Խնճիճեանի ունէր մօտ 25,000  
սուն, բայց անպաղար խողովութիւններէ և  
մահաւանդ ժլժ դարու մէջ պատահած սաս-  
տիկ սովէն ստիպուած քաղաքացիք՝ ցրուեր  
են զանազան կողմեր, այնպէս որ անցեալ  
դարու սկիզբը կան եղեր միայն 5000 սուն

բնակիչ, յորոց 1500 տուն հայ, 200—300 տուն հաղարկի ասորի և սակաւաթիւ նեւասորականներ, իսկ մնացածը քուրդ և թուրք։ Ազգային ուղեւորն Բարսնակ պէյ (1847 թուին) կը հաշուէ ընդ ամէնը 25,600 հոգի բնակիչ, որոնց 20,000ը քուրդ և թուրք, 5000ը հայ և 600ի չափ ասորի և հազու պիւ Վ. Բինէ (1892ին) քաղաքիս և նոյնատուն վիճակի բնակչաց թիւն միահամուս կը հաշուէ 38,886 հոգի, հետեւեալ կերպով բաժնուած.

Հայք Լուսաւորչական . . . . .	16086
» Բողոքական . . . . .	200
Մահմետականք . . . . .	20800
Եւրոպի ասորի . . . . .	1800
<hr/>	
Գումարն . . . . .	58886

Ըստ ազգային Պատրիարքարանի 1880 թուի վիճակագրութեան, Բաղէշ ունէր 1532 Հայոց տուն և 10726 հայ բնակիչ։ Նոր և ստոյգ մարդահամար մը չունենալով քաղաքին բնակչաց այժմեան թուոյն վրայ տեղեկութիւն չենք կարող տալ. բայց յայտնի է որ Հայք թէև վերջին դէպքերուն մեծապէս վնասուեցան և շատ (գրեթէ 1000 անձ) զոհեր ունեցան, սակայն այժմ եւս 10000էն աւելի լինելու են, որովհետեւ 1880էն մինչև 1900 թուականը համեմատաբար 1000—1500 անձ բազմացած պէտք են լինել։


Հայք ունին չորս բարաշէն եկեղեցիներ. ա. Կաւրակ Ս. Նշան, որ Ս. Կիրակոս եւս կը կոչուի. վեց սիւներու վրայ հաստատուած գմբեթաւոր եկեղեցի մ'է, կակուղ սրբատաշ բառակուսի բարերով շինուած. նորոգուած գուհար մը կայ, նոյն օրէն ստացաւ Կարմրակ գոհար մը կայ, նոյն օրէն ստացաւ Կարմրակ անունը։ Այս մասունքը ներկուած կը համարին Փրկչի արիւնով և մեծապէս կը պաւտուեն, նոյն իսկ այլազգեք կ'երգնուն Կարմրակի ձախի իշուս, ըսելով։ Եկեղեցոյս մէջ կը պահուի նոյնպէս Ս. Ստեփանոս նա-

խաղկայի մասունքը։ Ս. Սարգիս, որոյ աւագ սեղանի տակէն առատ ու անուշ ջուր մը կը բղխէ, և ստորերկրեայ ջրմուղներով քաղաքին քանազան թաղերու մէջ կը բաժնուի. բնակիչներէն շատերը այս ջուրը կը գործածեն։ գ. Հինգ խորան, կը գտնուի վերոյիշեալ եկեղեցոյն զիմաց, այսպէս կոչուած է հինգ խորաններ ունենալուն համար։ դ. Ս. Գեորգ եկեղեցի, Աւերմկանայ թաղին մէջ։ Այս եկեղեցիներու հետ թիւնը, ինչպէս յայտնի է թուականներէն, երկու և կէս դարէն անպին չեն անցնիր։

Բաղէշ այս եկեղեցիներէն զառ ունի չորս վանքեր, երեքը քաղաքին արեւելեան, հարաւարեւմտեան և հիւսիսարեւելեան կողմերը, և մին քաղաքին մէջ, որ կը կոչուի Ահիսուրու կամ լաւ եւս Ահիսուրու վանք, վասն զի կոտուցուած է Սրբոյն Յովհաննու Կարապետի անուամբ, համանուն թաղին մէջ։ Աւանդութեամբ կ'ըսուի նաեւ, թէ Ամիր և Տօլ անուն երկու եղբայրներ նորոգած լինելով այս վանքը և եկեղեցին, այս պատճառաւ իրենց անուամբ Աւերտօրա վանք կոչուած է. բայց ստոյգ չի թուիր այս աւանդական ենթադրութիւնը։ Շինուածքը գոլութեան արձանի բան մը չունի, բայց դերքը խիստ գեղեցիկ և զուարճալի է։ Դիմացէն կ'անցնի անընդհատ խոխովմամբ մեր վերը յիշած նոյնանուն գետակն, որուն եզերք բոլոր վանքի երկայնութեամբ պարակ է։ Եկեղեցին սիւնազարդ է և գմբեթաւոր, միւս վանքերու և քաղաքի եկեղեցիներէն ամենէն մեծն է։ Դասին մէջտեղը թաղուած են իրարու մօտ Վարդան և Բարսեղ վարդապետները, որ իրենց ժամանակին երեսելի եղած են. երկրորդը առաջնոյն աշակերան է։ Քաղաքիս առաջնորդներն առաջ այս վանքին մէջ կը նստէին բայց այժմ առաջնորդարանը փոխուած է Կարմրակ եկեղեցին։ Վանքիս հիւսիսային կողմը, քարէնէց մը հետո և աւելի բարձր դիրքով կը գտնուի Ս. Սիւրեն եկեղեցին, որ այժմ մզկիթ եղած է. ժամանակաւ կար նաեւ Ս. Կղեմէս եկեղեցի մը, որ նոյնպէս այժմ մզկիթ դարձած է։ Միւս երեք վանքերն կը կոչուին, Գոմաց Աստուածամօնի վանք, Ալեխու Ս. Աւ-

տուեացանքն, խնդիրկատար Աստուածային  
վանք, որոց նկարագիրն բրած կնք իրենց  
կարգին: Բազէշի Եպիսկոպոսներն եւ ունին  
եկեղեցի մը, իսկ բոլորական Հայր ժողո-

ղարան մը: Մահմադականք ունին 45 մկկիթ,  
յորոց պիտաւորներն կը կոչուին: Էմիր-Շեշ  
սկստին, Ճամիլ-Աթիք, Գրգըլ-Մեհար,  
Մեհարի-Խաթուն եւ Շերիֆէ, այս վերջները




տաննն աւելի մեծագործ է եւ Կմբիթը կի-  
տաւորի ձեռ ունի, միւսամրկիթներու ոմանց  
գմբիթը սրածայր է: Հայր ունին չորս վար-  
ժարաններ՝ Վարքանեան, Մեհարոսեան, Լու-

սաբաբեան եւ Մ. Սարգիսի Բողոքականք կես  
ունին իրենց վարժարանները: մըս, մնա  
211 Եշանաւոր է Բազէշ վաճառականութեամբ,  
թէ եւ շահի ազնիւ կործաւորներ սակիթի

և մեծարեսայ գիտականքու և ուրիշ բարակ նիւթէ զգեստեղինաց, ստիպյն իւր կարմիր ներկած պատուական կտան տարածուած և Հայաստանի շատ գաւառաց մէջ, որ և կը կոչուի Բաղէշու շիւի: Ճամանակաւ բազմաթիւ հայ կտաւագործներ կամ ջուլհակներ կային հոս, որք հեռ գհեաւ ցրուելով շատ նուագեցան և կտաւագործներու շատ կ'օգնեն բազարիս մէջ գանուաղ բորակային ջրերը, յորս ներկարարներ կը լուան իրենց կտաւը: Տեղոյս կտաւը գեռ չներկած՝ գործուածքին խոշորութիւնն կ'երեւի, բայց տորոնով կարմիր ներկուելէն վերջ, շատ աղնիւ և և թաւշի բնբուշութիւն կը ստանայ: Բաղէշի գրեթէ բոլոր կանայք, թէ տան մէջ և թէ գուրք, իրենց մեծագին զգեստուց և զարդուց վերայէն՝ իրրեւ ծածկոյթ կը հագնին այս կտաւն կարած երկար շապիկներ: Միւս արհեստարարներն կը գանուին սպիւրիշ, գերձակ, երկաթագործ, կոշիակար, խազախորդ, և այլն: Ասեաւորին համեմատ չէ խանութներու և շուկայի գեղեցկութիւնն, անշուք են և շատ մթին: Շուկայի տանիքն սր հողայարի է, կը ծառայէ իրրեւ ճեմելու տեղ, ուր կը վաճառուին նաեւ ցորեն և այլ մթերքներ: Շուկայի միջէն կը վազէ հիւսիսային կողմէն եկող վտակը, որուն վրայ տեղ տեղ կան քարաշէն կամուրջներ: Մտավաճառներու և մանրավաճառներու շուկաները լայն, բարձրակամար և տեղի կանոնաւոր շինուած են: Վաճառատանց և կըրպակաց թիւն 900 էն աւելի է: Կան բանի մը մեծ և փոքր քարաշէն խաներ. եթէ խան, և ուր խան, և այլն. երեք մեծ քարաշէն բազնիքներ, Խան-հաւաւը, Խան-հաւաւը, Փաշա-հաւաւը: Ունի 9 փուռ, 4 մեծ սրճարան, յորում լրագիրներ կը կարդան, և ուրիշ 42 սրճարաններ և 44 ջրաղացներ: Շատ գեղեցիկ և անողջարար է Բաղէշի

օդն, որոյ գարունը և ամառը միշտ գոլուած է շրջակայ գաւառաց մէջ: Այլ եղանակաց մէջ, բաղարացիք իրենց բոլոր ազատ մանակները կ'անցընեն այգիներու և պար-



տիկաց մէջ, զուարճանալով բնութեան գեղեցկութեամբ: Իսկ ձմեռն բնջակառակը շատ դանաշունչ և անտանելի է այս տեղ: Շնա-

5347  
ՊԱ-359

նաւոր է քաղաքս նաեւ ջրի առատութեամբ .  
անուշահամ մտակներէ դատ, հոս գրեթէ  
ամէն տուն ունի իւր աղբիւրը, սրոնց զխա-  
ւորներն են . Լօլօլ, Ռաշօ, Ծէրիֆ խանի  
և Մաթաշ աղայի աղբիւրները, Սեֆէր պե-  
կենց ակները, և այլն : Ընդհանրապէս զար-  
նան ժամանակ մտակներու մէջ առատու-  
թեամբ կը գտնուին Վանայ ծովակի տա-  
ռնիս ձկան տեսակին նման մանր ձկներ :

Բաղէշի բերքերն են՝ մեղր, դոթոր, խեփ,  
ծխախոտ, լոշտակ, խաղող, գինի, օղի, ուռպ,  
նուռ, թուփ, թուղ, խնձոր, տանձ, սալոր,  
սերկեւել, ծիրան, կաղին, ընկոյզ, կեռաս,  
բալ, ձմերուկ, սեխ, և այլն : Քաղաքիս Հայք  
խիտ ճարպիկ են և զործօն, և զրամ ու  
հարստութիւն դիզելու մեծ յաջողակութիւն  
ունենալով, այս կողմանց առաջին վաճա-  
ռականներն են : Իրենց մէջ գատարի և ծոյլ  
մէկը չի գտնուիր . շարունակ կ'երթեւեկեն  
այլեւայլ գաւառներ կտաւեղէններ և այլ նիւ-  
թեր վաճառելու համար : Տղայք անգամ  
հազիւ թէ քիչ մը գրել կարդալ կը սորվին,  
անմիջապէս արուեստի կը մտնեն : Այս  
պատճառաւ ամբողջ քաղաքին մէջ գժուար  
է գտնել գիտնական և զբաղէտ անձինք :  
Բնաւորութեամբ աշաւորջ են, խարուիլ չգի-  
տեն, բայց լաւ կերպով կը խաբեն . իրենց  
քաղաքին մէջ արիասիրտ են, իսկ քաղա-  
քէն դուրս երկչոտ : Բաղէշցոց հայ լեզուն  
թէեւ մօտ է Մշեցոց բարբառին, սակայն  
երկրի դրից պատճառաւ, կամ լաւ եւս, քրդե-  
րու ազդեցութեան տակ՝ սրոնց շատերն եւս  
հայերէն կը խօսին, առանձին յատկութիւն-  
ներ ունի, աւելի ծանր և գժուարհասկնալի  
է շրջակայ գաւառաց Հայոց : Տեղւոյս Հայք  
եւս ունին իրենց ինքնուրոյն ազգային սո-  
վորութիւններն և երգերն . ինչպէս Համբարձ-  
ման տօնին վիճակի սովորութիւնը, և այլն :

Բաղէշի արեւելեան կողմը գտնուած բարձր  
լեռան գագաթին վրայ քառակուսի դիրքով  
կիսակործան կամարակապ շէնք մը կայ Տեր-  
տիվան անուամբ, որ Պարսից խաներու ժա-  
մանակէն մնացած է . այս տեղէն կ'երեւայ  
քաղաքին ամէն կողմը, նաեւ Ռասիւլայ կո-  
չուած հովան մէկ մասը . Ս. Փետրգ եկե-  
ղեցին այս լեռան ստորտը շինուած ըլլա-

լով, լեռն ալ նոյն անուամբ կը կոչուի : Այս  
լեռը գոյացած է սեւ կախող քարի հանրէ,  
յորոց կը շինուին դիր գրեւու քարետախ-  
տակներ : Լեռանս զմացը ուրիշ բարձր բլուր  
մը կայ և վրան բերդաման շէնքի աւերակ-  
ներ, որ անցեալ դարու սկիզբները քաղա-  
քիս տիրող Ծէրիֆ պէյի ապարանը եղած  
է ժամանակաւ :

Քաղաքիս անուամբ կը կոչուին գաւառ մը  
և նահանգ . գաւառի սահմանքն են հիւսիսէ  
և արեւմուտքէ Մշոյ գաւառը, արեւելքէ Վա-  
նայ նահանգը և հարաւէն Սղերտու գաւա-  
ռը : Ունի 4 գաւառակ, 108227 բնակիչ  
և 434 գիւղ : Բաղէշի նահանգը ձեւացած  
է 1875 թուին . կ'ինկնայ 38° 8' 40" 42'  
արեւելեան երկայնութեան և 37° 45' 39" 30'  
հիւսիսային լայնութեան մէջ . շրջապատուած  
է հիւսիսէն կարնոյ, արեւելքէն Վանայ, հա-  
րաւէն և արեւմուտքէն Տիգրանակիրտի նա-  
հանգներէն : Տարածութիւնն է 29 850 քառ.  
հազարամետր՝ գրեթէ 400 000 բնակչօք :  
Բաժնուած է չորս գաւառաց, սրոնք կը ստա-  
րաբաժանին 19 գաւառակաց և միահամուռ  
ունին 2088 գիւղ :

Նահանգս առհասարակ լեռնային է և ու-  
նի շատ ձորեր . երկիրը շատ տեղ ապտուա-  
ժուտ է և սակաւաբեր, բայց կը գտնուին  
նաեւ պարարտարօտ և բերրի վայրեր : Չմեռ  
ժամանակ երբեմն սաստիկ բուքեր կ'ընէ և  
կը ձեւանան բարձր լեռանց վերին մասերը  
և խոր ձորերու վերին եզերքը վտանգաւոր  
ձեւան հիւսք կամ տեղական բարբառով ու-  
սիւք, սրոնք գարնան յանկարծ սարսափելի  
սրտամամբ կը փչին, վրասելով կամ թաղելով  
ինչ որ իրենց կը հանդիպի : Անտառները սա-  
կաւածիւ են և օր աւուր՝ նուազելու ենթա-  
կայ, սրովհետեւ անկանոն կերպով և ան-  
խնայ կտրուած են և կը կտրուին եղածները :  
Այս պատճառաւ քաղաքի և դիւղերու տները  
ծածկելու հարկաւոր գերանները և տախ-  
տակները կը պատրաստեն կամ պաղատու  
ծառերէ և կամ բարտի ծառէ, որ մեծ ինամ-  
քով կը բազմացնեն : Բարձրաբերձ և ան-  
մատոյց լեռանց վրայ տեղ տեղ կը գտնուին  
ընկուզի մեծամեծ ծառեր՝ ընկուղասէր աղ-  
ուաններէ անկուած, սրոնց համար աւանդա-

բար կը պատմեն, թէ «ագոսան շատ ազահ է ընկուզի, որով կշտանալէն յետոյ՝ մի քանի հաս կը տանի և կը թաղէ անմատոյց լեւրանց վրայ հողին տակ, իբրև իրեն պաշար այն ժամանակուան, երբ այլ եւս ծառոց վրայ իր փորը չի կրնար կշտացնել ընկուզով, իրեն նշան դնելով ամպը: Գործ նշանը հաստատուն չլինելով, ամէն անգամ ադաւը չի կրնար գանել իւր պահած ընկոյզն, որ հողի տակ կը մնայ և բուսնելով մեծ ծառ կը դառնայ այդ անմատոյցի վայրաց մէջ»: Նահանգիս մէջ կան շատ տեսակ խոտեր, ծաղիկներ և բոյսեր, զորս կը գործածեն դեղերու տեղ: Պազոց կողմանէ եւս առատ է և ունի բնօրի տեսակներ մանուսանդ տանձի և խնձորի: Հարաւային ձորաւայրերու մէջ կը գտնուի նաեւ ձիթենի: Թռչուններէն յիշենք կարաւ, լոր, տատրակ, արոս, սարեակ, հազարան պիւլպիւլ՝ որ լորի կը նմանի՝ գլուխը և աչիս սեւ, իսկ մարմինը ծիրանի գեղին և ձայնը բազր, վայրի բազ, սագ, և այլն: Չորրորտանի կենդանիներէն ունի եղջերու, այծեամն, ձի, ջորի, էջ, կով, եզ, սչխար, այծ, վարազ, աղուս, արջ՝ սպիտակ և սեւ, կան նաեւ փնտակար օձեր՝ բոյց սակաւթիւ, և այլն:

Հետեւեալ տախտակէն կը տեսնուին տարբեր տեսակի կենդանիները, թէ տարուան մէջ որչափ արժէքով և ինչ բերքը կը ներմուծուին նահանգիս մէջ:

**Ն Ե Ր Մ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Ի Կ Ն**

Ա Ն Ո Ւ Ա Ն Զ Բ Ե Ր Ո Ց	Ա Ր Թ Է Ք Ն ՕՍՄ. ՈՍԿԻ
Հիւսուածք բամբակի . . . . .	50000
» և մետաքսեղէնք . . . . .	50000
» » » . . . . .	500
» » և գորգեր . . . . .	5000
Բամբակ . . . . .	5500
» . . . . .	2000
Շաքար . . . . .	1500
Սուրճ . . . . .	500
Քարիւղ . . . . .	300
Կրկաթ . . . . .	100
» . . . . .	500
Տորոնի արմատ . . . . .	1200
Նրկաթեղէնք . . . . .	20000
Չանազան նիւթեր . . . . .	5000

Գումարն... 117900

Նահանգիս բերոց վրայ բնդհանուր գաղափար մ'առնելու համար ի ստորեւ կը գնենք ըստ Վ. Քինլի, միջին հաշուով, տարուան մէջ վաճառքի գուրս զրկած նիւթերը, հանգերձ իրենց արժէքով:

**Ա Ր Տ Ա Մ Ո Ւ Ծ Ո Ւ Կ Ն**

Ա Ն Ո Ւ Ա Ն Զ Բ Ե Ր Ո Ց	Ա Ր Թ Է Ք Ն ՕՍՄ. ՈՍԿԻ
Գաղե լէճ սպիտակ . . . . .	2000
» կարմիր . . . . .	1200
Գեղին հունա . . . . .	7000
Գլխուր սեւ . . . . .	7000
» սպիտակ . . . . .	8000
Կոճղ ծառոց (կաղնիի, և այլն) . . . . .	2000
Մամ . . . . .	1500
Մեղր . . . . .	800
Գինի . . . . .	2000
Չամիչ . . . . .	2500
Ոչխար . . . . .	14000
Այծի մորթ . . . . .	6000
Գումշու մորթ . . . . .	2000
Մուշտակներ . . . . .	4000
Չոր աղբերներ . . . . .	1200
Կարմիր կտաւ . . . . .	8000
Չանազան նիւթեր . . . . .	5000

Գումարն... 74000

**Որով ներմուծուին կը գոյանայ**

գրեթէ . . . . .	2700000	Ֆրանկ
և արտածութենէն... 1700000		»

Գումարն... 4400000 ֆրանկ:

Տարուան մէջ Բաղէշի նահանգը, միջին հաշուով յառաջ կը բերէ 2956000 գլուխ կեղանի, հետեւեալ կերպով բաժնուած.

Ոչխար և այծ . . . . .	2 000 000	գլուխ
Գումէշ, եղ և կով . . . . .	800 000	»
Չի . . . . .	90 000	»
Էջ . . . . .	60 000	»
Չորի . . . . .	6 000	»

Գումարն... 2 956 000 գլուխ:

Ունի նաեւ հանքեր գեղին, կարմիր, սպիտակ և սեւ մարմարիտներու, ինչպէս նաեւ երկաթի, պղնձոյ, ոսկոյ և արծաթի, որոնք այժմ բարեբաղդաբար գործածութեան մէջ չեն: Առատութեամբ կը գտնուի նաեւ ծծումբ, և Բաղէշ քաղաքէն խնդիրկատար Աստուածածնայ վանքը տանող ձոր մը կայ որ կը

կոչուի Գառախոտիկ՝ նոյն տեղւոյն ծծմբային դարչահատութեան համար: Նշանաւոր է բազմաթիւ հանքային ջրերով. հարուստ է նաեւ աղահանքերով, բայց տեղութիւնը կը գործածէ միայն 6 աղաւաղաններ, անորո՞ծ թողլով տասնեւեօթը ընտիր քարացեալ աղահանքեր: — Նոր Հայաստան, 161-174: Տեղագր. Հայաս. 239-246: Ճնչրնրդ. ի Բաքերուն, 142-152: Եւ այլն:

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷՓԵՍԿԵԱՆ

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն

Առ Մեծարգոյ Հ. Սիմոն Վ. Երեմեան,  
Խմբագրապետ Բազմալից հանդիսարանի:

ՄԵՏԱՐԿՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ:

**Ա**ՐԱՐԱՏ Հանդիսի 1900 Օգոստոս և Սեպտեմբեր ամսոց թերթին մէջ (էջ 380) հրատարակուած ուրարտեան նորագիւտ արձանագրութեան մը ընթերցումը և թարգմանութիւնը ինձմէ խնդրած էիք: Ձեր ազնուութեան խնդրանացը սերով զիջանելով, առաջիկայիս նոյները կը խաւրեմ Ձեզի՝ պատշաճ տեղեկութիւնները սակաւուք յառաջագրելով:

Արձանագրութիւնն հարթ կոթող մըն է, որուն երկայնութիւնն է 3 արշին 14 վերշոկ (= մետր 2.75), լայնութիւնն 14 վերշոկ (= մետր 0.62), թանձրութիւնն 8 վերշոկ (= մետր 0.35): Կոթողին քարն՝ Էջմիածնի արեւելակողմը՝ իբր կէս ժամ հեռաւորութեամբ, Չուարթնոց եկեղեցւոյն հիւսիսոյ արեւմտեան դրան վրայ հաստատեալ գտած է Էջմիածնի միաբան Արժանապատիւ Հ. Խաչիկ վարդապետ, երբ յիշեալ տարւոյն ամարան մէջ հոն պեղումներ ընել կու տար:

Արձանագրութիւնս Ուրարտուի թագաւոր Ռուշատայ Բ. ի է, որ Ք. ա. իբր 685-675 թագաւորած ըլլալով, Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին և անոր որդւոյն Ասորդանի ժամանակակից էր՝ հաւանականօրէն:

Յայտ է թէ ասորեստանեան թագաւորք Բիւանա վիճակին մէջ նստող թագաւորները՝ Ուրարտուի թագաւորք՝ կը կոչէին: Ստուգիւալ այնպէս էր:

Նոյն արձանագրութիւնն ունի 47 տող, և բոս հրատարակեալ օրինակին՝ մեծագոյն յոժ մասամբ մաքուր մեղի հասած է: Սակայն կան անդէն մասամբ եղծեալ սեպածե նշանագիրներ, որոնց մէկ մասն թերեւս ընդօրինակութեան և կամ հրատարակման համար փորագրողին՝ սեպագրութեան անհմուտ ըլլալուն պէտք է որ ընծայուի: Այսպիսի պակասաւոր գրերը ուղղեալ վերանորոգելով [ ] անկիւնաւոր փակադժերու մէջ առած եմ: Յայտ է թէ ( ) կիսարտըր փակադիժներու մէջ եղած որոշանիշ նախակարգ զաղափարագիրերն անձայն ըլլալով, ընթերցողն զանոնք պէտք չէ որ հնչէ: Բուն հնչականութիւն ունեցող զաղափարագիրք՝ որոնք կիսարտըր փակադիժերու մէջ չեն, սեպագրագիտաց սովորութեան համեմատ՝ սուսմերեանաքաղական և կամ ասորեստանեան բառերով և գլխազիրներով կը ներկայացուին: Ծանօթ է ընդհանրապէս որ մեր ուրարտեան սեպագրագէտ դպիրներն՝ հնչական կամ ձայնական զաղափարագիրերը շատ աւելի կը գործածէին քան թէ ասորեստանեան դպիրք, որոնցմէ ուսեալ և փոխառեալ էին սեպագրական արուեստը:

Իմ աստէն գործած թարգմանութիւնս բառացի և անձուկ առընչական է, ինչպէս նիւթն ինքնին կը պահանջէ: Լեզուաբանական համեմատութիւններ ընել զանց կ'ընեմ աստէն: Երբ ի մտայ լոյս կը տեսնայ իմ հաւաքածոյս՝ զոր Ձեր յարգոյ Միաբանութեան տպարանն տպելու վրայ է, նոյնի բառարանին մէջ՝ արձանագրութեանս իւրաքանչիւր բառն պատշաճ լեզուաբանական համեմատութիւնը պիտի որ ունենայ: Նոյն հաւարածոյին մէջ՝ հարթ կոթողիս արձանագրութիւնն 38. AA. թիւերը ունի. և որովհետեւ խիստ ուշ եկաւ ի լոյս, զայն իբր յետ-գրութեան՝ միւս 91 արձանագրութիւններէն վերջը կարգած դրած եմ՝ առիպեալ ի հարկէ:

Ռուշատայ Բ. ի այս արձանագրութիւնն հինգ մասէ կը բաղկանայ: Պարունակեալ նիւթոց ծանրակաւութեան համեմատ՝ առա-